

Հաստատված է՝

«Գյումրու Մ. Նալբանդյանի անվան  
պետական մանկավարժական ինստիտուտ»

ՊՈԱԿ-ի գիտական խորհրդի

**« 26 » մայիսի 2012 թ. նիստում**

Խորհրդի նախագահ՝ \_\_\_\_\_ Վ. Գրիգորյան

## **ԿԱՆՈՆԱԿԱՐԳ**

# **«ԳՅՈՒՄՐՈՒ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ**

### **1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

- 1.1. Սույն Կանոնակարգը սահմանում է «Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» (այսուհետ՝ ԳՊՄԻ) պրոֆեսորադասախոսական կազմի պաշտոնատեղերի ստեղծման, տեղակալման, պայմանագրի կնքման ու վերակնքման, բացառիկ դեպքերում՝ պաշտոններում նշանակման սկզբունքները:
- 1.2. Առանձին հավելվածով տրվում է «Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի պայմանագրային, համատեղության և ժամավճարային կարգով աշխատանքի ընդունելու կարգը» (տե՛ս Հավելված 1):
- 1.3. Բուհի պրոֆեսորադասախոսական կազմը ձևավորվում է մրցութային կամ ոչ մրցութային կարգով: Աշխատանքային հարաբերությունները հաստատվում են պայմանագրային հիմունքներով:

### **2. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ՏԱՐԱԿԱՐԳԵՐ**

- 2.1. Բուհի պրոֆեսորադասախոսական կազմն ընդգրկում է հետևյալ տարակարգերը՝ դասախոս, ասիստենտ, դոցենտ, պրոֆեսոր:
- 2.2. Ամբիոնի դասախոսի պաշտոն կարող են զբաղեցնել անձինք, ովքեր ունեն մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորման աստիճան:

- 2.3. Ամբիոնի ասիստենտի պաշտոն կարող են զբաղեցնել անձինք, ովքեր համապատասխան մասնագիտության գծով ունեն գիտական աստիճան կամ ավարտել են ասպիրանտուրան՝ հանձնելով թեկնածուական որակավորման բոլոր քննությունները:
- 2.4. Ամբիոնի դոցենտի պաշտոն կարող են զբաղեցնել անձինք, ովքեր համապատասխան մասնագիտության գծով ունեն գիտական աստիճան և դոցենտի կոչում:
- 2.5. Ամբիոնի պրոֆեսորի պաշտոն կարող են զբաղեցնել անձինք, ովքեր, որպես կանոն, ունեն դոկտորի գիտական աստիճան և պրոֆեսորի կոչում:
- 2.6. Բուհի արվեստի, ֆիզիկական կուլտուրայի ֆակուլտետների ամբիոնների պրոֆեսորի, դոցենտի և ասիստենտի պաշտոնները զբաղեցնելու համար գիտական աստիճանի առկայությունը պարտադիր պայման չէ: Առաջնայինը հավակնորդի ստեղծագործական ավանդն է արվեստի, մշակույթի և սպորտի տվյալ ճյուղի զարգացման գործում, նրա ստեղծագործական գործունեության ճանաչումը Հայստանի Հանրապետությունում և նրա սահմաններից դուրս:
- 2.7. Պրոֆեսորադասախոսական կազմի համար սահմանված տարակարգերին առընթեր բուհում գործում են նաև պրոֆեսորադասախոսական հատուկ տարակարգեր՝ ամբիոնի պաշտոնային դրույքների հաշվին.
- 2.7.1. խորհրդատու պրոֆեսոր (դոցենտ)՝ ՀՀ կամ արտասահմանյան բուհերից, հետազոտական և գիտաարտադրական կազմակերպություններից (ձեռնարկություններից) հրավիրված և բուհում մինչև 0.5 դրույքով ժամանակավորապես ձևակերպված մասնագետ (ընթացակարգը տե՛ս Հավելված 1),
- 2.7.2. համատեղող պրոֆեսոր, դոցենտ, ասիստենտ, դասախոս՝ տվյալ կամ այլ բուհի, ինչպես նաև հետազոտական և գիտաարտադրական կազմակերպությունների (ձեռնարկությունների) համապատասխան տարակարգով և մինչև 0.5 դրույքով ժամանակավորապես ձևակերպված մասնագետ (ընթացակարգը տե՛ս Հավելված 1),
- 2.7.3. ուսումնական ասիստենտ՝ նախատեսվում է պրոֆեսորի, դոցենտի կամ ասիստենտի հետ համատեղ գործնական և լաբորատոր պարապմունքներ իրականացնելու, կուրսային աշխատանքներ և նախագծեր ղեկավարելու համար: Համալրվում է մագիստրոսների, ասպիրանտների, ավագ լաբորանտների և ուսումնական լաբորատորիաների վարիչների կազմից (տե՛ս Հավելված 1):
- 2.8. Բուհի գիտխորհուրդը կարող է վաստակաշատ պրոֆեսորներին շնորհել պատվավոր պրոֆեսորի տիտղոս՝ սահմանված կարգով (կարգը տե՛ս Հավելված 2)

- 2.9. Բուհում վարչական աշխատանքի անցած դասախոսները համատեղության կարգով կարող են մինչև 0.5 դրույք պահպանել իրենց պրոֆեսորադասախոսական տարակարգը և նույն դրույքի սահմաններում մասնակցել պրոֆեսորադասախոսական պաշտոնների տեղակալման գործընթացին՝ համաձայն սույն Կանոնակարգի 4-րդ բաժնում սահմանված կարգի: Լիազորությունների ավարտից հետո նրանք վերականգնվում են իրենց գիտամանկավարժական պաշտոնում՝ նախկին կարգավիճակով:
- 2.10. Այլ բուհերից պրոֆեսորադասախոսական կազմում ընդգրկված անձանց պրոֆեսորադասախոսական տարակարգը կարող է պահպանվել:

### **3. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ՝ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՏԵՂԱԿԱԼՄԱՆ ԵՎ ԱՈՍՁ ՔԱՇՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ**

- 3.1. Պրոֆեսորադասախոսական կազմի՝ պաշտոնների տեղակալման և առաջաշման չափանիշներն են՝
- 3.1.1. հավակնորդի որակավորման (ակադեմիական) աստիճանը, գիտական աստիճանը և գիտական կոչումը,
  - 3.1.2. մասնագիտական աշխատանքի ստաժը,
  - 3.1.3. ուսումնական, հետազոտական, մեթոդական-կազմակերպչական գործունեության որակական ցուցանիշները:
  - 3.1.4. ուսանողների կողմից դասախոսի աշխատանքի որակի գնահատումը:
- 3.2. Ըստ պրոֆեսորադասախոսական տարակարգերի՝ սահմանվում են ուսումնական, հետազոտական և մեթոդական-կազմակերպչական գործունեության տեսակները.
- 3.2.1. Դասախոսի և ուսումնական ասիստենտի համար՝**
- գործնական պարապմունքների, ուսումնական սեմինարների անցկացում, հանրակրթական առարկաների դասավանդում,
  - մասնագիտական առարկաներից հաշվարկա-գրաֆիկական, կուրսային աշխատանքների ղեկավարում,
  - ուսումնական և մանկավարժական պրակտիկաների ղեկավարում:
- 3.2.2. Ասիստենտի համար՝**
- դասախոսությունների և գործնական պարապմունքների վարում (հիմնականում բակալավրիատում),
  - ուսանողների կանոնավոր խորհրդատվությունների անցկացում,
  - մասնագիտական առարկաներից կուրսային աշխատանքների ղեկավարում,
  - բակալավրի ծրագրով ավարտական աշխատանքների ղեկավարում,
  - մասնակցություն ուսումնական ստորաբաժանման ուսումնամեթոդական և հետազոտական աշխատանքներին:
- 3.2.3. Դոցենտի համար՝**
- դասախոսությունների վարում (բակալավրիատում, մագիստրատուրայում և ասպիրանտուրայում),
  - գիտամեթոդական սեմինարների անցկացում,

- բակալավրի ծրագրով ուսումնառուների ավարտական աշխատանքների, մագիստրանտների թեզերի և ասպիրանտների ատենախոսությունների ղեկավարում,
- թեկնածուական ատենախոսության պաշտպանությունից հետո գիտական և ուսումնամեթոդական աշխատանքների հրատարակում.
- հետազոտական աշխատանքների կազմակերպում և իրականացում,
- զեկուցումներ հանրապետական և միջազգային գիտաժողովներում,
- մասնակցություն ծրագրային, մեթոդական և մշտական հանձնախմբերի, խորհուրդների, որակավորման և գիտական աստիճաններ շնորհող մարմինների, փորձագիտական և խորհրդատվական հանձնախմբերի աշխատանքներին:

#### **3.2.4. Պրոֆեսորի համար՝**

- դասախոսությունների վարում (հիմնականում մագիստրատուրայում և ասպիրանտուրայում),
- գիտամեթոդական սեմինարների անցկացում, մագիստրանտների թեզերի և ասպիրանտների ատենախոսությունների ղեկավարում,
- մագիստրոսական և ասպիրանտական ծրագրերով նախատեսված նոր մասնագիտացումների հիմնում և համապատասխան դասընթացների մշակում,
- ատենախոսության (թեկնածուական, դոկտորական) պաշտպանությունից հետո գիտական և ուսումնամեթոդական աշխատանքների, մասնավորապես, գիտական մենագրությունների և ուսումնական ձեռնարկների հրատարակում,
- զեկուցումներ հանրապետական և միջազգային գիտաժողովներում,
- ամբիոնում հետազոտական ծրագրի, խմբի, լաբորատորիայի հիմնում և ղեկավարում,
- մասնակցություն բուհական և արտասահմանյան գիտակազմակերպչական, գիտամեթոդական, փորձագիտական, ինչպես նաև գիտական աստիճաններ շնորհող խորհուրդների, հանձնախմբերի, հանրապետական և միջազգային գիտատեխնիկական միությունների, ընկերակցությունների և այլ մարմինների աշխատանքներին,
- խորհրդատվական գործունեություն:

## **4. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ**

4.1. Բուհի պրոֆեսորադասախոսական կազմի պաշտոնավարման տարիքային սահմանները կարգավորվում են ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ:

4.2. Բուհի պրոֆեսորադասախոսական կազմը համալրվում է հետևյալ ընթացակարգերով.

4.2.1. **թափուր պաշտոնների տեղակալման կարգով**, որոնք ամբիոններում կարող են առաջանալ՝

- տարեկան ուսումնական բեռնվածության երաշխավորված կայուն աճի,

- պրոֆեսորադասախոսական կազմից որոշ անձանց՝ կենսաթոշակային տարիքի հասնելու և աշխատանքից ազատվելու,
- առանձին անձանց՝ առողջական վիճակի կամ այլ պատճառներով գիտամանկավարժական գործունեության վաղաժամկետ դադարեցման,
- պայմանագրի ժամկետը լրանալուց հետո այն չվերակնքելու դեպքերում:

Համապատասխան պաշտոնների կարող են հավակնել.

- պրոֆեսոր, դոցենտ՝ պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ ունեցող անձինք, որոնց գիտամանկավարժական գործունեությունը համապատասխանում է սույն Կանոնակարգի 3.2.4. և 3.2.3. հոդվածներին,
- ասիստենտ, դասախոս՝ համապատասխանաբար սույն Կանոնակարգի 2.3., 3.2.2. և 2.2., 3.2.1. հոդվածների պահանջները բավարարող անձինք:

4.2.2. պաշտոններում առաջաշման կարգով, որն իրականացվում է գիտամանկավարժական գործունեության բնագավառում պաշտոնի հավակնորդի ակնառու հաջողությունների և որակական առաջընթացի առկայության դեպքերում (գիտական աստիճանի շնորհում, մասնագիտության կրթական չափորոշիչի, ուսումնական և առարկայական ծրագրերի մշակում, դասագրքերի, ուսումնական ձեռնարկների և ուսումնամեթոդական նյութերի հրատարակում, հետազոտական գործունեության ծավալում, գիտական աշխատանքների հրատարակում, մասնակցություն հանրապետական և միջազգային գիտաժողովներին, հանրապետական և միջազգային գիտամանկավարժական միություններին ու ընկերություններին:

4.2.3. բացառիկ դեպքերում՝ պաշտոններում նշանակման կարգով, համապատասխան պաշտոնների կարող են հավակնել.

4.2.3.1. ասիստենտի տարակարգում՝

- սույն Կանոնակարգի 2.6. հոդվածի պահանջները բավարարող անձինք,

4.2.3.2. դոցենտի տարակարգում՝

- բուհում երկարամյա արդյունավետ ուսումնագիտական գործունեություն իրականացրած ասիստենտները, ովքեր չունեն գիտական աստիճան, բայց որոնց գիտամանկավարժական գործունեությունը համապատասխանում է դոցենտին ներկայացվող որակական չափանիշներին (տե՛ս Հայաստանի Հանրապետության Բարձրագույն որակավորման հարձնաժողով (ՀՀ ԲՈՀ տեղեկագիր 9, 2001 թ., էջ 60-66 և հավելված 3),
- սույն Կանոնակարգի 2.6. հոդվածի պահանջները բավարարող անձինք,
- տարիքային թոշակի անցած դոցենտները՝ ակնհայտ գիտամանկավարժական ավանդի և բուհին մատուցած բացառիկ ծառայությունների համար /մասնակի կամ լրիվ դրույքով/,

4.2.3.3. պրոֆեսորի տարակարգում՝

- բուհում երկարամյա արդյունավետ ուսումնագիտական գործունեություն իրականացրած անձինք, ովքեր ունեն թեկնածուի գիտական աստիճան ու դոցենտի կոչում, և որոնց գիտամանկավարժական գործունեությունը համապատասխանում է պրոֆեսորին ներկայացվող որակական չափանիշներին, (տե՛ս Հայաստանի Հանրապետության Բարձրագույն որակավորման հարձնաժողով (ՀՀ ԲՈՀ) տեղեկագիր 9, 2001 թ., էջ 60-66),
- առանց մանկավարժական ստաժի սահմանափակման՝ բուհ հիմնական աշխատանքի հրավիրվող առաջատար մասնագետները, ովքեր ունեն դոկտորի գիտական աստիճան ու դոցենտի կոչում, և որոնց գիտամանկավարժական գործունեությունը համապատասխանում է պրոֆեսորին ներկայացվող որակական չափանիշներին (տե՛ս Հայաստանի Հանրապետության Բարձրագույն որակավորման հարձնաժողով (ՀՀ ԲՈՀ տեղեկագիր 9, 2001 թ., էջ 60-66 և հավելված 4),
- սույն Կանոնակարգի 2.6. հոդվածի պահանջները բավարարող անձինք,
- տարիքային թոշակի անցած պրոֆեսորները՝ ակնհայտ գիտամանկավարժական ավանդի և բուհին մատուցած բացառիկ ծառայությունների համար /մասնակի կամ լրիվ դրույքով/:

**4.2.4. պրոֆեսորադասախոսական հատուկ տարակարգեր զբաղեցնելու կարգով** համապատասխան պաշտոնների կարող են հավակնել.

- խորհրդատու պրոֆեսորի (դոցենտի) և համատեղող պրոֆեսորի (դոցենտի, ասիստենտի, դասախոսի)՝ ՀՀ և արտասահմանյան բուհերի, հետազոտական և գիտաարտադրական կազմակերպությունների (ձեռնարկությունների)՝ համապատասխան գիտական կոչում ունեցող և պրոֆեսորադասախոսական տարակարգը զբաղեցնող անձինք,
- ուսումնական ասիստենտի՝ մագիստրոսներ, ասպիրանտներ, ավագ լաբորանտներ և լաբորատորիաների վարիչներ:

**4.2.5. պաշտոններում պայմանագրերի վերակնքման կարգով** (վերապայմանագրում).

- համաձայն սույն Կանոնակարգի 3.2.1.-3.2.4. հոդվածների՝ պայմանագրի ժամկետը լրանալուց 4 ամիս առաջ համապատասխան պաշտոնները տեղակալած անձանց նույն պաշտոններում պայմանագրերի վերակնքման գործընթացն իրականացվում է պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերաբերյալ սահմանված կարգով պաշտոնը զբաղեցնող անձի հաշվետվության ընդունման և ամբիոնում այդ պաշտոնի առկայության դեպքում:

4.3. Մրցույթային-պայմանագրային և պայմանագրային եղանակով բուհի պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորումն իրականացվում է հետևյալ հաջորդականությամբ.

- 4.3.1. թափուր պաշտոնների տեղակալման (հոդվ. 4.2.1.), պաշտոններում առաջընթացի (հոդվ. 4.2.2.) և բացառիկ դեպքերում՝ պաշտոններում նշանակման (հոդ. 4.2.3.) հանգամանքներում հավակնորդների գործերի քննարկման արդյունքով կազմակերպվում է մրցույթ: Մրցույթով անցած հավակնորդների հետ կնքվում է պայմանագիր, և նրանք հրամանագրվում են համապատասխան պաշտոններում:
- 4.3.2. պրոֆեսորադասախոսական հատուկ տարակարգեր զբաղեցնելու (հոդվ. 4.2.4) և պաշտոններում պայմանագրերի վերակնքման (վերապայմանագրման) (հոդվ. 4.2.5), ինչպես նաև սույն Կանոնակարգի 4.3.1. հոդվածում նշված պաշտոնների հավակնորդներին առանց մրցույթ անցկացնելու դեպքերում հավակնորդների գործերի քննարկման արդյունքով կնքվում է պայմանագիր, և նրանք հրամանագրվում են համապատասխան պաշտոններում:
- 4.4. Սահմանվում են պրոֆեսորադասախոսական պաշտոններում պայմանագրի կնքման հետևյալ ժամկետները.
- 4.4.1. մրցույթային կարգով թափուր պաշտոնների տեղակալման դեպքում կնքվում է պայմանագիր՝ 5 տարի ժամկետով,
- 4.4.2. ոչ մրցույթային կարգով պաշտոնների տեղակալման դեպքում կնքվում է պայմանագիր՝ 1 տարի ժամկետով,
- 4.4.3. պրոֆեսոր և դոցենտ՝ առաջին անգամ՝ 1, իսկ այնուհետև՝ 5 տարի ժամկետով /սույն պաշտոնները նախկինում զբաղեցրած անձանց համար՝ 5 տարի/:
- 4.5. Ռեկտորը դասախոսի պաշտոնում և պրոֆեսորադասախոսական հատուկ տարակարգերում հավակնորդների նշանակման, նրանց հետ պայմանագիր կնքելու և հրամանագրելու իրավունքը կարող է փոխանցել բուհի պրոռեկտորին:
- 4.6. Պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման գործընթացում պաշտոնի հավակնորդների ներկայացրած փաստաթղթերի ցանկը, ներկայացման ժամկետը, հավակնորդների գործերի քննարկման ընթացակարգը, մրցույթի անցկացումը, պայմանագրի կնքումը և պաշտոնում հրամանագրումը սահմանվում են համապատասխան կարգերով:
- 4.7. Բուհում պրոֆեսորադասախոսական նոր տարակարգերի անցնելիս չի թույլատրվում աշխատավարձի չափի նվազեցում՝ նախկինի համեմատությամբ:
- 4.8. Պաշտոնում նշանակված անձի աշխատանքի անցնելու հրամանը տրվում է մինչև ուսումնական կիսամյակների սկիզբը՝ սեպտեմբերի 1-ը և փետրվարի 1-ը:
- 4.9. Պրոֆեսորադասախոսական կազմի հետ կնքված պայմանագրի ժամկետում, որպես կանոն, 1-3 անգամ ուսանողների կողմից անցկացվում է ուսուցման և մանկավարժական գործունեության որակի գնահատման անանուն սոցիոլոգիական հետազոտություն, որի անցկացման կարգը, հարցման թերթիկների բովանդակությունը և գործունեության գնահատման չափանիշները սահմանվում են համապատասխան կարգով:

4.10. Առկա պաշտոնատեղերի՝ տարբեր պատճառներով վերացման (ուսումնական բեռնվածության զգալի նվազում, ֆակուլտետի, ամբիոնի լուծարում և այլն), ինչպես նաև ըստ ընդունված կարգի պայմանագիրը չվերակնքելու դեպքերում, պրոֆեսորադասախոսական պաշտոն զբաղեցնող անձին պայմանագրի ժամկետի ավարտից առնվազն 2 ամիս առաջ տրվում է համապատասխան գրավոր ծանուցում:

## **5. ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԵՎ ԱՌԱՋԽԱՂԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ**

5.1. ԳՊՄԻ-ում ուսումնաօժանդակ կազմի մեջ մտնում են ամբիոնների ուսումնական կաբինետների վարիչները, լաբորանտներն ու ավագ լաբորանտները, պրեպարատորները, արհեստանոցների ուսումնական վարպետները, գրադարանի աշխատակիցները:

5.2. Ուսումնական կաբինետի աշխատանքային ժամանակացույցը ամբիոնը կազմում է համաձայն ԳՊՄԻ-ի աշխատանքային կանոնադրության՝ 9:00-ից մինչև 20:00-ն:

5.3. Ուսումնական կաբինետի աշխատանքը կատարում են ուսումնական կաբինետի վարիչը և ամբիոնի լաբորանտը: Վերջինս նաև իրականացնում է ամբիոնի գործավարությունը:

5.4. Լաբորատոր-փորձարարական աշխատանքների իրականացնող ամբիոններին ըստ աշխատանքների ծավալի հատկացվում են լաբորանտ, ավագ լաբորանտ, պրեպարատոր և ուսումնական վարպետ հաստիքները: Ավագ լաբորանտը ապահովում է նաև լաբորատոր աշխատանքների տեխնիկական անվտանգությունը:

5.5. Ամբիոնի ուսումնական կաբինետի վարիչ և ավագ լաբորանտ պաշտոններում իրավունք ունեն աշխատելու մագիստրոսի (կամ դիպլոմավորված մասնագետ) մասնագիտական կրթական աստիճան ունեցող անձիք:

Ամբիոնի լաբորանտ իրավունք ունի աշխատելու բակալավրիատի (կամ դիպլոմավորված մասնագետ) մասնագիտական կրթական աստիճան ունեցող անձիք:

Ամբիոնի պրեպարատոր և ուսումնական վարպետ իրավունք ունեն աշխատելու նաև միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցող անձիք:

5.6. Ամբիոնի ուսումնաօժանդակ կազմի հաստիքների ձևավորման և տեղակալման հարցերը ամբիոնի վարիչի ներկայացմամբ քննարկվում է ֆակուլտետային խորհրդում, որից հետո ֆակուլտետի ղեկանը հարցերը ներկայացնում է ինստիտուտի համապատասխան պրոռեկտորին, որն էլ ներկայացնում է ինստիտուտի ռեկտորատի քննարկմանը:

Ինստիտուտի ռեկտորատի դրական որոշումից հետո համապատասխան հավակնորդները հրամանագրվում են և նրանց հետ կնքվում է աշխատանքային պայմանագրեր:

Ամբիոնի ուսումնաօժանդակ հաստիքներում աշխատանքի ընդունման ժամանակ, որպես կանոն, առավելություն են ստանում այն հավակնորդները,

որոնք ունեն մասնագիտական որակի բարձրացման հեռանկարներ:

- 5.7. Գրադարանի աշխատակից իրավունք ունեն աշխատելու բակալավրիատի (կամ դիպլոմավորված մասնագետ) մասնագիտական կրթական աստիճան ունեցող անձինք:
- 5.8. Ուսումնաօժանդակ կազմն իրավունք ունի մասնագիտական առաջխաղացման նպատակով սովորելու հաջորդ կրթական աստիճանում՝ անհատական ժամանակացույցով պատշաճ իրականացնելով աշխատանքային պարտականությունները:

## **6. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՀԵՌԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ**

- 6.1. Պրոֆեսորադասախոսական կազմի յուրաքանչյուր աշխատակիցը, որպես կանոն, աշխատանքից ազատվում է աշխատանքային պայմանագրի ժամկետը լրանալու դեպքում՝ ռեկտորի համապատասխան հրամանով:
- 6.2. Աշխատակիցը աշխատանքից կարող է ազատվել իր դիմումի համաձայն՝ ըստ գործող կարգի:
- 6.3. Աշխատակիցը կարող է ազատվել աշխատանքից՝
- 6.3.1. ուսումնական ծանրաբեռնվածության ծավալի կրճատման դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ և ԳՊՄԻ-ի կանոնադրությամբ սահմանված կարգով:
  - 6.3.2. Զբաղեցրած պաշտոնին անհամապատասխանության դեպքում:
  - 6.3.3. Աշխատանքային պայմանագրով նախատեսված պարտավորությունները պատշաճ մակարդակով չկատարելու դեպքում :
  - 6.3.4. Դասախոսական էթիկայի (բարոյական) նորմերի կոպիտ խախտման դեպքում:
- 6.4. Աշխատակցին աշխատանքից ազատման որոշման մասին հարցը գործատուն համաձայնեցնում է արհկոմի հետ:
- 6.5. Աշխատակցին զբաղեցրած պաշտոնին անհամապատասխանության մասին որոշումը ընդունվում է հետևյալ ընթացակարգով.
- ա) ռեկտորի հրամանով ստեղծվում է հատուկ հանձնաժողով՝ ինստիտուտի գիտական խորհրդի, համապատասխան ֆակուլտետի խորհրդի, ինստիտուտի հասարակական կազմակերպության անդամներից, տվյալ աշխատակցի աշխատակազմի գործունեության (դասախոսությունների, գործնական, սեմինար ու լաբորատոր պարապմունքների անցկացում, գիտական և մեթոդական աշխատանքների կատարում) որակները ստուգելու համար:
  - բ) հատուկ հանձնաժողովը ստուգման նյութեր ներկայացնում է ինստիտուտի պրոֆեսորադասախոսական պաշտոնի տեղակալման հանձնաժողովին, որն էլ պատրաստում է հիմնավորված եզրակացություն և ներկայացնում ինստիտուտի գիտական խորհրդի քննարկմանը:
  - գ) Ինստիտուտի գիտական խորհուրդը, քննարկելով աշխատակցի զբաղեցրած

պաշտոնին անհամապատասխանության հարցը, փակ գաղտնի քվեարկությամբ ընդունում է համապատասխան որոշում:

դ) եթե ինստիտուտի գիտական խորհուրդը որոշում է, որ աշխատակիցը չի համապատասխանում զբաղեցրած պաշտոնին, ռեկտորը մեկ ամսվա ընթացքում տալիս է հրաման նրան աշխատանքից ազատելու վերաբերյալ:

6.6. Աշխատանքից ազատվելու որոշման հետ անհամաձայնության դեպքում աշխատակիցը կարող է որոշումը բողոքարկել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

## **7. ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱՐԶՄԻ ՀԵՌԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ**

7.1. Ուսումնաօժանդակ կազմի յուրաքանչյուր աշխատակիցը, որպես կանոն, աշխատանքից ազատվում է աշխատանքային պայմանագրի ժամկետը լրանալու դեպքում՝ ռեկտորի համապատասխան հրամանով:

7.2. Ուսումնաօժանդակ կազմի աշխատակիցը աշխատանքից կարող է ազատվել իր դիմումի համաձայն՝ ըստ գործող կարգի:

7.3. Ուսումնաօժանդակ անձնակազմի աշխատակիցը կարող է ազատվել աշխատանքից՝

7.3.1. աշխատանքի ծավալի կրճատման կամ կառուցվածքային փոփոխությունների դեպքում, ինչպես նաև ԳՊՄԻ-ի կանոնադրությամբ, ներքին կարգապահական կանոններով և ներքին իրավական ակտերով սահմանված այլ խախտումների դեպքում:

7.3.2. Մասնագիտական որակների անհամապատասխանության դեպքում՝ ըստ ատեստացիայի արդյունքների:

7.3.3. Աշխատանքային պայմանագրով նախատեսված պարտավորությունները պատշաճ մակարդակով չկատարելու դեպքում:

7.3.4. Դասախոսական եթիկայի (բարոյական) նորմերի կոպիտ խախտման դեպքում:

7.4. Ուսումնաօժանդակ անձնակազմի աշխատակցին աշխատանքից ազատման որոշման մասին հարցը գործատուն համաձայնեցնում է ԳՊՄԻ-ի արհկոմի հետ: պ

7.5. Ուսումնաօժանդակ կազմի բոլոր աշխատակիցները, որպես կանոն, երեք տարին մեկ անգամ պետք է անցնեն մասնագիտական ատեստավորում:

7.6. Ատեստավորումը կազմակերպվում է ըստ ֆակուլտետների՝ ռեկտորի կողմից նշանակված համապատասխան հանձնաժողովների կողմից:

7.7. Ուսումնաօժանդակ անձնակազմի աշխատակիցը աշխատանքից ազատվելու որոշման հետ անհամապատասխանության դեպքում աշխատակիցը կարող է որոշումը բողոքարկել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

## 8. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1. Սույն Կանոնակարգը կիրառվում է ԳՊՄԻ-ի գիտխորհրդում հաստատվելու օրվանից:

8.2. Համարել ուժը կորցրած 31.03.2005թ հաստատված «Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման կանոնակարգը:

**ԳՅՈՒՄՐՈՒ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ  
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ, ՀԱՄԱՏԵՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԺԱՄԱՎՃԱՐԱՅԻՆ  
ԿԱՐԳՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ  
ԿԱՐԳ**

**1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

- 1.1. Մույն կարգը, հիմք ընդունելով ԳՊՄԻ-ի պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման կանոնակարգը, սահմանում է պայմանագրային, համատեղության և ժամավճարային կարգով աշխատանքի ընդունելու ընթացակարգը, սկզբունքները և պայմանները:
- 1.2. Պայմանագրային, համատեղության և ժամավճարային կարգով աշխատանքի կարող են ընդունվել «ԳՊՄԻ-ի պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման կանոնակարգի» 2-րդ կետի 2.2, 2.3, 2.4 և 2.5 ենթակետերով նախատեսված պրոֆեսորադասախոսական բոլոր տարակարգերին համապատասխանող, ինչպես նաև այդ տարակարգերին ներկայացված պահանջները բավարարող անձիք:

**2. ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ, ՀԱՄԱՏԵՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԺԱՄԱՎՃԱՐԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ  
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ**

- 2.1. Պայմանագրային, համատեղության և ժամավճարային կարգով աշխատանքի ընդունվող հավակնորդներին (այսուհետ՝ Հավակնորդ) ներկայացնում է ամբիոնը՝ թափուր ժամերի առկայության դեպքում:
- 2.2. Հավակնորդի՝ աշխատանքի ընդունելու հարցը քննարկվում է ամբիոնի նիստում: Արձանագրության քաղվածքը՝ համապատասխան հիմնավորումով և հավակնորդի՝ սույն կարգով սահմանված պարտադիր փաստաթղթերով, ներկայացվում է ԳՊՄԻ-ի ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին:
- 2.3. Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորը փաստաթղթերի փաթեթը ուսումնասիրելուց հետո ռեկտորատի քննարկմանն է ներկայացնում հավակնորդի թեկնածությունը:
- 2.4. Ռեկտորատի դրական որոշման դեպքում հավակնորդի հետ կնքվում է աշխատանքային պայմանագիր:

**3. ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ, ՀԱՄԱՏԵՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԺԱՄԱՎՃԱՐԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ  
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

- 3.1. Պրոֆեսորի պաշտոնում աշխատանքի ընդունվող Հավակնորդը, որպես կանոն, պետք է ունենա համապատասխան մասնագիտության դոկտորի գիտական աստիճան և/կամ պրոֆեսորի գիտական կոչում:
- 3.2. Ռոցենտի պաշտոնում աշխատանքի ընդունվող Հավակնորդը, որպես կանոն, պետք է ունենա համապատասխան մասնագիտության գծով գիտական աստիճան և/կամ դոցենտի գիտական կոչում:
- 3.3. Դասախոսի պաշտոնում աշխատանքի ընդունվող Հավակնորդը պետք է ունենա դիպլոմավորված մասնագետի կամ համապատասխան մասնագիտության գծով մագիստրոսի որակավորման աստիճան:
- 3.4. Դասախոսի պաշտոնում աշխատանքի ընդունվելու պարտադիր պայմանն է գերազանցության դիպլոմի առկայությունը կամ մասնագիտական առարկաների «գերազանց» և «լավ» («լավ» գնահատականների նվազագույն քանակով) առաջադիմությունը:
- 3.5. Հավակնորդը դիմումին կից ներկայացնում է հետևյալ փաստաթղթերը՝
- անձնական թերթիկ՝ լուսանկարով,
  - անձնագրի պատճենը,
  - սոցիալական քարտի պատճենը,
  - աշխատանքային գրքույկի քաղվածքը (առկայության դեպքում),
  - ինքնակենսագրություն,
  - գիտական աշխատությունների ցուցակ (առկայության դեպքում),
  - դիպլոմի պատճենը,
  - դիպլոմի միջուկի պատճենը,
  - գիտական աստիճանը հաստատող փաստաթղթի պատճենը,
  - գիտական կոչումը հաստատող փաստաթղթի պատճենը:

**ՊԱՏՎԱՎՈՐ ՊՐՈՖԵՍՈՐԻ ՏԻՏՂՈՍ ՇՆՈՐՀԵԼՈՒ  
ԿԱՐԳԸ**

1. Պատվավոր պրոֆեսորի տիտղոս շնորհվում է.
  - 1.1. Ռեկտորի հետ համաձայնեցված նշանակումների հանձնախմբի առաջարկությամբ, ռեկտորատը բաց քվեարկությամբ ԳՊՄԻ-ի գիտխորհրդին առաջարկություն է ներկայացնում ԳՊՄԻ-ի պրոֆեսորներին և արտասահմանյան երկրների վաստակաշատ գիտնականներին ԳՊՄԻ-ի պատվավոր պրոֆեսորի տիտղոս շնորհելու մասին:
  - 1.2. Պատվավոր պրոֆեսորի տիտղոս շնորհելու համար կարող է հիմք լինել միջազգային ճանաչում ունեցող գիտական ուղղության կամ դպրոցի ստեղծումը:
  - 1.3. Պատվավոր պրոֆեսորի տիտղոսի հավակնորդի գործի քննարկումն ընթանում է ԳՊՄԻ-ի գիտխորհրդի նիստում՝ փակ (զաղտնի) քվեարկությամբ: ԳՊՄԻ ռեկտորատը կանոնադրությամբ սահմանված կարգով Հավակնորդին շնորհում է պատվավոր պրոֆեսորի տիտղոս և տալիս է համապատասխան նմուշի դիպլոմ՝ դրական որոշում ընդունելու դեպքում:

**ՂՈՑԵՆՏԻՆ ՆԵՐԿԱՅԱՅՎՈՂ ՈՐԱԿԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**

Դոցենտի գիտական կոչում կարող է շնորհվել՝

ա) գիտությունների դոկտորի գիտական աստիճան ունեցող անձանց,

ովքեր վերջին 3 տարվա ընթացքում գիտական կոչում շնորհող բուհում իրականացրել են մասնագիտությանը համապատասխան գիտամանկավարժական գործունեություն և ունեն հրատարակված առնվազն մեկ ուսումնամեթոդական աշխատանք:

բ) Գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ունեցող անձանց, ովքեր գիտական կոչում շնորհող բուհում ատենախոսության պաշտպանությունից հետո ունեն գիտամանկավարժական աշխատանքի առնվազն 3 տարվա ստաժ, վերջին 3 տարվա ընթացքում այդ բուհում իրականացրել են մասնագիտությանը համապատասխան գիտամանկավարժական գործունեություն, թեկնածուական ատենախոսություն պաշտպանելուց հետո տվյալ բնագավառում ունեն առնվազն 3 հրատարակված գիտական (գիտամեթոդական) և ուսումնամեթոդական աշխատանք, ընդ որում՝ առնվազն մեկ աշխատանք (առանց համահեղինակի) ունեն տպագրված մասնագիտական գրախոսվող պարբերականում կամ ԳՊՄԻ «Գիտական տեղեկագիր» հանդեսում:

գ) Դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի որակավորում ունեցող անձանց, ովքեր ունեն գիտամանկավարժական աշխատանքի առնվազն 20 տարվա ստաժ, այդ թվում՝ գիտական կոչում շնորհող բուհում՝ առնվազն 3 տարվա: Վերջին 3 տարվա ընթացքում այդ բուհում իրականացրել են մասնագիտությանը համապատասխան գիտամանկավարժական գործունեություն, ունեն մենագրություն (առնվազն 14 տպագրական մամուլ ծավալի) կամ ՀՀ կրթության, գիտության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) կողմից երաշխավորված հրատարակված դասագիրք՝ առանց համահեղինակների և՛կամ դասագրքեր՝ համահեղինակներով, ու տվյալ բնագավառում՝ առնվազն 15 գիտական (գիտամեթոդական), ուսումնամեթոդական աշխատանք, որոնցից առնվազն 2-ը հրատարակվել են վերջին 3 տարվա ընթացքում, ընդ որում՝ այդ հոդվածներից մեկը պետք է հրատարակված լինի մասնագիտական գրախոսվող պարբերականում (առանց համահեղինակության) կամ ԳՊՄԻ «Գիտական տեղեկագիր» հանդեսում:

դ) Մշակույթի, սպորտի ասպարեզում դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի որակավորում ունեցող անձանց հետևյալ կարգով՝

- ✓ արվեստի բնագավառում՝ համաձայն սույն կարգի «գ» ենթակետի,
- ✓ ստեղծագործական, կատարողական արվեստի ու ճարտարապետության բնագավառներում՝ անձանց՝ ովքեր ունեն գիտամանկավարժական աշխատանքի առնվազն 10 տարվա ստաժ, վերջին 3 տարվա ընթացքում գիտական կոչում շնորհող բուհում իրականացրել են մասնագիտությանը համապատասխան գիտամանկավարժական գործունեություն

- ✓ ունեն Հայաստանի Հանրապետության, այլ երկրների (համապատասխան պայմանագրի կամ համաձայնագրի (առկայության դեպքում) պատվավոր կոչումներ,
- ✓ հանրապետական կամ միջազգային ցուցահանդեսների մասնակիցներ են,
- ✓ հանրապետական փառատոների, մրցույթների հաղթողներ, պետական մրցանակակիրներ են,
- ✓ հեղինակ են առնվազն 5 բեմադրության, ստեղծագործական աշխատանքի, տեսագրության, կառույցի, նախագծի, հանրապետական կամ միջազգային մրցույթներում մրցանակ ստացած առնվազն 1 ստեղծագործության,
- ✓ ղեկավարել են հանրապետական կամ միջազգային փառատոների կամ մրցույթների դափնեկիրների (գեղարվեստական խմբեր, համույթներ),
- ✓ ունեն հրատարակված գիտական (գիտամեթոդական), ուսումնամեթոդական աշխատանքներ (այդ թվում՝ առանց համահեղինակների), ընդ որում՝ առնվազն 3 աշխատանք՝ վերջին 3 տարվա ընթացքում, ընդ որում՝ աշխատանքներից մեկը պետք է հրատարակված լինի գրախոսվող մասնագիտական պարբերականում կամ ԳՊՄԻ «Գիտական տեղեկագիր» հանդեսում:
- ✓ սպորտի բնագավառում, ովքեր ունեն գիտամանկավարժական աշխատանքի առնվազն 15 տարվա ստաժ, վերջին 3 տարվա ընթացքում գիտական կոչում շնորհող բուհում իրականացրել են մասնագիտությանը համապատասխան գիտամանկավարժական գործունեություն,
- ✓ ունեն Հայաստանի Հանրապետության, այլ երկրների (համապատասխան պայմանագրի կամ համաձայնագրի առկայության դեպքում) պատվավոր կոչումներ,
- ✓ հանրապետական կամ միջազգային մրցումների մրցանակակիրներ են,
- ✓ պատրաստել են սաներ, ովքեր մասնակցել են օլիմպիական խաղերի, աշխարհի, Եվրոպայի առաջնությունների,
- ✓ ունեն հրատարակված կամ համապատասխան բուհի գիտական խորհրդի կողմից երաշխավորված գիտական (գիտամեթոդական), ուսումնամեթոդական աշխատանքներ (այդ թվում՝ առանց համահեղինակների), ընդ որում՝ առնվազն 3 աշխատանք՝ վերջին 3 տարվա ընթացքում: Հրատարակված հոդվածներից առնվազն մեկը պետք է հրատարակված լինի մասնագիտական գրախոսվող պարբերականում կամ ԳՊՄԻ «Գիտական տեղեկագիր» հանդեսում:

**ՊՐՈՖԵՍՈՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՈՐԱԿԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ**

Պրոֆեսորի գիտական կոչում շնորհվում է՝

ա) գիտությունների դոկտորի գիտական աստիճան, դոցենտի գիտական կոչում ունեցող անձանց.

- ✓ ովքեր ունեն գիտական կոչում շնորհող բուհում առնվազն 5 տարվա գիտամանկավարժական աշխատանքի ստաժ, վերջին 5 տարվա ընթացքում այդ բուհում իրականացրել են մասնագիտությանը համապատասխան գիտամանկավարժական գործունեություն և դոկտորական ատենախոսություն պաշտպանելուց հետո ունեն տվյալ բնագավառում 5-ից ավելի հրատարակված գիտական և ուսումնամեթոդական աշխատանքներ, այդ թվում՝ 3 աշխատանքներ՝ հրատարակված գրախոսվող գիտական պարբերականներում կամ ԳՊՄԻ «Գիտական տեղեկագիր» հանդեսում, ղեկավարել են պաշտպանած ատենախոսություն կամ նախարարության կողմից երաշխավորված դասագրքի՝ առանց համահեղինակների, կամ առնվազն 3 դասագրքի՝ համահեղինակներով,
- ✓ առնվազն վերջին մեկ տարին աշխատում են գիտական կոչում շնորհող բուհում կամ կազմակերպությունում և 5 պաշտպանած ատենախոսության գիտական ղեկավար են:

բ) գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ունեցող անձանց,

- ✓ ովքեր ունեն դոցենտի կոչում և գիտամանկավարժական աշխատանքի առնվազն 30 տարվա ստաժ, վերջին 5 տարվա ընթացքում գիտական կոչում շնորհող բուհում իրականացրել են մասնագիտությանը համապատասխան գիտամանկավարժական գործունեություն, ունեն բուհի կամ կազմակերպության գիտական խորհուրդների կողմից երաշխավորված հրատարակված մենագրություն կամ նախարարության կողմից երաշխավորված՝ հրատարակված դասագիրք՝ առանց համահեղինակների, կամ 3 դասագիրք՝ համահեղինակներով, և առնվազն 30 գիտական (գիտամեթոդական) և ուսումնամեթոդական աշխատանք տվյալ բնագավառում, այդ թվում՝ վերջին 5 տարվա ընթացքում՝ 3 աշխատանք հրատարակված գրախոսվող գիտական պարբերականում կամ ԳՊՄԻ «Գիտական տեղեկագիր» հանդեսում և ղեկավարել են 3 պաշտպանած ատենախոսություն:
- ✓ առնվազն վերջին մեկ տարին աշխատում են գիտական կոչում շնորհող բուհում կամ կազմակերպությունում, գիտական ղեկավար են եղել առնվազն 5 պաշտպանած ատենախոսությունների, ունեն մենագրություն կամ նախարարության կողմից երաշխավորված հրատարակված դասագիրք՝ առանց համահեղինակների, կամ 3 դասագիրք՝ համահեղինակներով, և տվյալ բնագավառում առնվազն 20 գիտական (գիտամեթոդական) և ուսումնամեթոդական աշխատանք, այդ թվում՝ վերջին 5 տարվա ընթացքում՝ 3 աշխատանք, որոնք հրատարակված են մասնագիտական գրախոսվող գիտական պարբերականներում կամ ԳՊՄԻ «Գիտական հանդեսում»:

զ) մշակույթի, սպորտի բնագավառի դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի որակավորում ունեցող անձանց, ովքեր ունեն դոցենտի կոչում և այդ կոչումը ստանալուց հետո

- ✓ արվեստագիտության բնագավառում՝ համաձայն սույն կարգի «ա» և «բ» ենթակետերի,
- ✓ ստեղծագործական, կատարողական արվեստի ու ճարտարապետության բնագավառներում՝ անձանց, ովքեր ունեն գիտամանկավարժական աշխատանքի առնվազն 15 տարվա ստաժ, վերջին 5 տարվա ընթացքում գիտական կոչում շնորհող բուհում զբաղվել են մասնագիտությանը համապատասխան գիտամանկավարժական գործունեությամբ և՛կամ՝
- ✓ ստացել են Հայաստանի Հանրապետության և այլ երկրների (համապատասխան պայմանագրի կամ համաձայնագրի առկայության դեպքում) պատվավոր կոչումներ,
- ✓ մասնակիցներ են միջազգային ցուցահանդեսների և ունեցել են անհատական ցուցահանդեսներ,
- ✓ մասնակիցներ են միջազգային մրցույթների և ունեցել են տարբեր ծրագրերով մենահամերգներ կամ մասնակցել են բեմադրությունների,
- ✓ հաղթողներ են հանրապետական և միջազգային փառատոներում, մրցույթներում, պետական մրցանակակիրներ են,
- ✓ հեղինակ են միջազգային մրցույթներում հաղթած ստեղծագործությունների, նախագծերի, կառույցների,
- ✓ ղեկավարել են միջազգային փառատոների, մրցույթների հաղթողների (գեղարվեստական խմբեր, համույթներ),
- ✓ ունեն հրատարակված կամ համապատասխան բուհի գիտական խորհրդի կողմից երաշխավորված գիտական (գիտամեթոդական) և ուսումնամեթոդական աշխատանքներ, ընդ որում՝ առնվազն 5 աշխատանք՝ վերջին 5 տարվա ընթացքում, որոնցից առնվազն 2-ը՝ հրատարակված գրախոսվող գիտական պարբերականում կամ ԳՊՄԻ «Գիտական տեղեկագիր» հանդեսում:
- ✓ սպորտի բնագավառում՝ անձանց, ովքեր ունեն գիտամանկավարժական աշխատանքի առնվազն 20 տարվա ստաժ, վերջին 5 տարվա ընթացքում գիտական կոչում շնորհող բուհում զբաղվել են մասնագիտությանը համապատասխան գիտամանկավարժական գործունեությամբ և՛կամ՝
- ✓ ստացել են Հայաստանի Հանրապետության և այլ երկրների (տվյալ երկրի հետ համապատասխան պայմանագրի կամ համաձայնագրի առկայության դեպքում) պատվավոր կոչումներ,
- ✓ հաղթել են միջազգային մրցումներում կամ պատրաստել են սաներ, ովքեր օլիմպիական խաղերի, աշխարհի և Եվրոպայի առաջնությունների մեդալակիրներ են,
- ✓ ունեն հրատարակված գիտական (գիտամեթոդական) և ուսումնամեթոդական աշխատանքներ, ընդ որում՝ առնվազն 5 աշխատանք՝ վերջին 5 տարվա ընթացքում, որոնցից 2-ը՝ հրատարակված գրախոսվող գիտական պարբերականում կամ ԳՊՄԻ «Գիտական տեղեկագիր» հանդեսում: